ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ՍՊԱՍՎԱԾ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ «Տնտեսագետ» հրատարակչությունը լույս է ընծայել փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սարգսյանի «Փիլիսոփայության դասընթաց»* ամբողջական ու առավել ընդգրկուն ուսումնական ձեռնարկը (դրա սեղմ ու դասընթացի մաս կազմող բաժինը հրատարակվել էր 2008-ին): Սա Սարգսյանի երկարատև համառ ու նպատակային աշխատանքի, մտորումների, վերլուծությունների, սեփական մտքի «լաբորատորիայում» տարբեր փորձարկումների բովով անցած ստեղծագործական բացահայտումների արդյունքն է, որ գալիս է լրացնելու նրա բազմաթիվ երկերի («19-րդ դարի հայ փիլիսոփայության ակնարկ», «Ժամանակակից հայ եկեղեցի», «Մշակույթի տեսություն», «Փիլիսոփայության դասընթաց» և այլն) շարքը, նաև հավաստելու, որ հեղինակը ինքնազարգացման, փիլիսոփայական բարդ հիմնախնդիրները յուրովի ուսումնասիրելու, արժեքավորելու, սեփական մտակառույցով այդ ամենը իմաստավորելու ստեղծագործական մակարդակում է: Եվ եթե հաշվի առնենք, որ ոչ բոլոր, անգամ անվանի գիտնականներն ու պրոֆեսորներն են, որ կարող են գրել ուսումնական, դասագրքային աշխատություններ, ապա Սարգսյանի գիրքն էլ ավելի է արժեքավորվում ու դառնում կրթամշակութային կարևոր իրողություն: Այս հանգամանքը ընդգծելի է նաև նրանով, որ մեզանում մինչ օրս, բացի մեկ-երկու փորձից, գոյություն չուներ փիլիսոփայության վերաբերյալ ամբողջական, բազմաշերտ, բովանդակալից աշխատանք, որը կարողանար բավարարել տվյալ դասընթացի ծրագրային պահանջները: Այս աշխատությունը կլրացնի այդ բացը և, այս առումով, կարող է օգտակար լինել ոչ միայն ՀՊՏՀ, այլև մյուս բուհերի ուսանողներին ու դասախոսներին, ասպիրանտներին, մասնագետներին:

Ա. Սարգսյանը լրջորեն ուսումնասիրել ու հաշվի է առել ռուսագիր և մայրենիով ստեղծված փիլիսոփայական գրականության, դասագրքերին բնորոշ յուրահատկությունները, փորձը, առավելություններն ու թերությունները: Արդյունքում ստեղծվել է ինքնատիպ հեղինակային դասընթաց, որը պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլև մեր համալսարանին՝ վկայելով այն մասին, որ այստեղ փիլիսոփայության առարկան կարևոր ու արժանապատիվ տեղ է գրավում:

«Փիլիսոփայության դասընթացը» ներառում է համաշխարհային ու հայ փիլիսոփայական մտքի պատմական ընթացքը, զարգացման միտում-

---

* **Ա. Սարգսյան,** Փիլիսոփայության դասընթաց, «Տնտեսագետ», Եր., 2010:

ները, առավել հատկանշական փիլիսոփայական ուսմունքները, հիմնախնդիրները, ականավոր փիլիսոփաներին բնութագրող գաղափարները, էականը՝ սկսած հին աշխարհից մինչև մեր օրերը՝ որպես տեսակետների, գաղափարների համապատկերը ընդհանրացնող համակարգ, վերլուծությունների ու մեկնաբանությունների տրամաբանված ամբողջություն:

Գիրքը բաղկացած է հինգ բաժնից: Առաջինում բացահայտված են փիլիսոփայության հիմնական յուրահատկությունը, հասկացային, կատեգորիալ համակարգին առնչվող որոշ հարցեր, փիլիսոփայական մտածողության՝ որպես տեսական մտածողության բարձրագույն ձևի ու կայունացած աշխարհայացքի ինքնատիպությունը, հոգևոր մշակույթի այլ տեսակների՝ դիցաբանության, կրոնի, գիտության, գեղարվեստի, հոգևոր կյանքի ու գաղափարախոսության հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները, առաջացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ նախադրյալները և այլն: Այդպիսով ակնհայտ է դառնում փիլիսոփայության այն հիմնարար դերակատարումը, որ առկա է մշակույթի ընդհանուր համակարգում, հասարակական և անհատական գիտակցության ոլորտներում: Այստեղ ներառված բազմաթիվ հարցադրումներ ու դրանց տրված պատասխաններ որոշակիորեն նախապատրաստում են դասընթացի շարադրման ընթացքը՝ մեթոդաբանական ու սկզբունքային նշանակություն ունենալով դրա հասկացման ու իմաստավորման համար:

Երկրորդ բաժինը հարուստ, տրամաբանված ու հիմնավորված նյութ է պարունակում նշանավոր փիլիսոփաների տեսական գործունեության, ուսմունքների, գաղափարների մասին՝ սկսած Հին Հնդկաստանի, Չինաստանի կրոնափիլիսոփայական ըմբռնումներից մինչև քսաներորդ դարը: Բացահայտված է այն հսկայական դերակատարումը, որ համաշխարհային փիլիսոփայական մտքի ուղենիշային սկզբունքների ձևավորման գործում ունեցել են հույն նշանավոր փիլիսոփաները՝ սոփեստներ, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել և ուրիշներ, նաև ուսմունքները՝ բնափիլիսոփայական, ատոմիստական, հարաբերապաշտական, մարդաբանական և այլն: Այս բաժնում, ըստ առանձին դարաշրջանների՝ միջնադար, նոր ու նորագույն ժամանակներ, շարադրված է փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքը, ներկայացված են հետագա ձեռքբերումները, միջնադարյան կրոնական փիլիսոփայությունից աշխարհիկ փիլիսոփայությանն անցումը այնպիսի տաղանդավոր մտածողների շնորհիվ, ինչպիսիք են Ռեկոնը, Դեկարտը, Կանտը, Հեգելը, Կոնտը, Նիցշեն և ուրիշներ: Փիլիսոփաների այս ընտրանու մտավոր համապատկերը ստեղծվում է էութենակազմ բացատրություններով, հիմնախնդիրների մեկնաբանման տրամաբանվածությամբ, հստակ ձևակերպումներով ու արժեքավորումներով, որոնք հնարավորություն են տալիս հասկանալու նրանց փիլիսոփայական ըմբռնումների պատմական ու արդիական նշանակությունը ընդհանուր գիտափիլիսոփայական ու աշխարհայացքային զարգացումների տեսանկյունից, դասական փիլիսոփայությունից ոչ դասականին անցման անհրաժեշտությունը՝ որպես մարդու և աշխարհի վերաբերյալ իմաստավորումների

նոր արտահայտություն, փիլիսոփայության արդիականացման նոր հնարավորություն:

Այս նույն մոտեցմամբ է շարադրված նաև հայ փիլիսոփայական մտքի զարգացումը (երրորդ բաժին) արդեն հետևյալ հիմնական շեշտադրմամբ՝ ազգային մշակութային կյանքի, ազգային գերխնդիրների իմաստավորումների, ազգապահպանման հիմնական նպատակի, մտավոր կյանքի զարգացման, փիլիսոփայության հիմնախնդիրների մշակվածության հասունացման չափանիշներով ու ընդհանրական անդրադարձներով: Այդպես է արժևորվում ու ազգային հիմնախնդիրների հոգևոր անդրադարձի կարևոր մաս դառնում Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Հովհաննես Իմաստասերի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Նալբանդյանի, Մամուրյանի, Արծրունու, Նժդեհի և ուրիշների փիլիսոփայական հայացքների ուսումնասիրությունը՝ որպես ազգային գաղափարախոսության ու ազատագրական պայքարի տեսական, փիլիսոփայական մեկնաբանությունների արտահայտություն:

Չորրորդ բաժինը ամենածավալունն է և, ըստ էության, ներառում է փիլիսոփայության հիմնական տեսական հարցադրումների ողջ համակարգը, ուսմունքների բազմազանությունը: Գոյաբանություն, իմացության տեսություն, գիտության ու տեխնիկայի փիլիսոփայություն, հասարակություն, պատմության փիլիսոփայություն, մշակույթ, մարդաբանություն. ահա այն առավել կարևոր ոլորտները, որ ընդգրկված են վեց գլուխներում: Դրանք պահանջում են հետազոտական մեծ հմտություն, անհատական մոտեցման համարձակություն ու հիմնավորվածություն, գիտության նվաճումները ընդհանրացնելու ու հարստացնելու նպատակ, ինչը Սարգսյանը իրականացրել է պատշաճ մակարդակով ու բարոյական պատասխանատվությամբ:

Հինգերորդ բաժինը վերաբերում է ժամանակակից փիլիսոփայական ուսմունքներին, որոնց ազդեցությունը չափազանց ակնհայտ է անցյալ դարի և ներկայիս մշակութային կյանքի, հոգեբարոյական իրավիճակի բոլոր հիմնարար ոլորտների վրա: Այդպիսիք են էկզիստենցիալիզմը, Ֆրոյդի հոգեվերլուծական ուսմունքը ու հետֆրոյդականության հայեցակարգը, նեոպոզիտիվիզմը, հետմոդեռնիզմը, որոնցից յուրաքանչյուրը մտածողության ու փիլիսոփայելու ինքնատիպ հայեցակարգ է և իրենց համադրությամբ որոնումն են դառնում մտավոր այն գործընթացների, որոնց նպատակն է վերլուծել, իմաստավորել մարդ աշխարհ փոխհարաբերության ձևավորման արդի ավելի բարդ ու հակասական շերտերը, բացահայտել մարդկային կեցության կազմավորման խորքային բնութագիրը, ինքնաճանաչման հնարավորությունները: Այս ուսմունքների ըմբռնումը ու վերլուծությունը պահանջում են մեծ փորձ ու տրամաբանություն, նույն ուսմունքի շրջանակներում տարբեր մոտեցումների առնչությամբ անհատականացված վերաբերմունք, ինչն, անկասկած, հատուկ է հեղինակին:

Կարծում եմ՝ պրոֆեսոր Արամ Սարգսյանի «Փիլիսոփայության դասընթացը» մեծապես կօգնի փիլիսոփայության դասավանդումն ավելի լիարժեք ու համակարգված դարձնելու, ուսանողների ինքնուրույն աշխատանք-

ներն արդյունավետ կազմակերպելու, փիլիսոփայական հիմնախնդիրներն ուսումնասիրելու, բացահայտելու դրանց դերն ու նշանակությունը, գիտակցելու լուծման անհրաժեշտությունը:

Ուզում ենք նշել նաև հետևյալը. փիլիսոփայության ոլորտում անառարկելի ճշմարտություններ ու շարադրման վերջնական չափանիշներ գոյություն չունեն. փիլիսոփայությունը ազատ մտածողության ու սուբյեկտիվ խորհրդածությունների հատուկ դրսևորում է, գիտելիքների բաց համակարգ: Դրան վերաբերող ուսումնական աշխատանքը պետք է շարադրված լինի ազատության ոգով, մի բան, որ հատուկ է նաև Ա. Սարգսյանի «Փիլիսոփայության դասընթացին»:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր